Հավելված 4

2025-2026 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025–2026 ուսումնական տարվա ընթացքում Պրակտիկայի կազմակերպման և շահակիցների հետ համագործակցության (ՊԿՇՀ) բաժինը, բակալավրիատի և մագիստրատուրայի աշխատանքային ուսումնական պլաններին համապատասխան, կազմակերպել և համակարգել է ընդհանուր 38 պրակտիկա, որոնցից՝

- *յոթ ուսումնական պրակտիկա* - (6-ը՝ առկա, 1-ը՝ հեռակա ուսուցման համակարգում),
- *տասնմեկ մանկավարժական պրակտիկա* - (7-ը՝ առկա, 4-ը՝ հեռակա ուսուցման համակարգում),
- *քսան մասնագիտական պրակտիկա* - (11-ը՝ առկա, 9-ը՝ հեռակա ուսուցման համակարգում)։

Ուսանողների պրակտիկաների արդյունավետ կազմակերպման նպատակով հաշվետու ժամանակահատվածում մասնաճյուղը համագործակցել է մի շարք պետական և ոչ պետական տարբեր կազմակերպությունների, հիմնարկների և ձեռնարկությունների հետ։ Գործել են 17 համագործակցության հուշագիր, 1 համագործակցության համաձայնագիր և 29 պայմանագիր։ Հաշվետու ուսումնական տարվա ընթացքում կնքվել է երկու պայմանագիր (Իջևանի Սպարտակ Սարգսյանի անվան N1 հիմնական դպրոց, Իջևանի Մարտիրոս Մարտիրոսյանի անվան N5 հիմնական դպրոց) և մեկ հուշագիր (ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ)։

Պրակտիկաները կազմակերպվել և իրականացվել են հաստատված ժամանակացույցին համապատասխան՝ հիմք ընդունելով մասնագիտական ամբիոնների կողմից ՊԿՇՀ բաժին ներկայացված ծրագրերը։

Ուսումնական պրակտիկան կազմակերպվել է «Պատմություն», «Զբոսաշրջություն», «Ֆինանսներ (ըստ ոլորտի)», «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա», «Դեկորատիվ-կիրառական արվեստ» և «Դիզայն» կրթական ծրագրերով: Պրակտիկային մասնակցել է **104 ուսանող**։ Պրակտիկաների ընթացքում ուսանողները հնարավորություն են ունեցել ամրապնդելու տեսական գիտելիքները, զարգացնելու մասնագիտական և գործնական կարողությունները, ինչպես նաև իրականացնելու կրթական ծրագրերի առանձնահատկություններից բխող ուսումնասիրություններ, վերլուծական, նախագծային և ստեղծագործական աշխատանքներ։

Ուսումնական պրակտիկաներն անցկացվել են ինչպես մասնաճյուղում, այնպես էլ տարբեր կազմակերպություններում և դաշտային պայմաններում՝ ընդգրկելով մասնագիտական տեսանկյունից կարևոր վայրեր և բնաշխարհագրական տարածքներ։

«Պատմություն» կրթական ծրագրի առկա ուսուցման 2-րդ կուրսի ուսանողները ուսումնասիրել են Հայաստանի Հանրապետության մարզերի և նախկին Արցախի Հանրապետության տարածքում գտնվող հնագիտական և պատմամշակութային հուշարձանները՝ ծանոթանալով դրանց պատմական նշանակությանը և մշակութային արժեքին։ Պրակտիկայի շրջանակներում իրականացվել է նաև այցելություն Կիրանցի Սուրբ Առաքելոց եկեղեցական համալիր, որտեղ ուսանողները տեղում ծանոթացել են ընթացող հնագիտական պեղումների կազմակերպման աշխատանքներին։

Զբոսաշրջություն» կրթական ծրագրի առկա և հեռակա ուսուցման 2-րդ կուրսերի ուսանողները ուսումնասիրել են Հայաստանի զբոսաշրջային ռեսուրսները, զբոսաշրջային ուղղությունները և

ենթակառուցվածքները: Պրակտիկայի ընթացքում իրականացվել է տարբեր բնակավայրերի զբոսաշրջային ներուժի գնահատում, երթուղիների գրավչության վերլուծություն, ինչպես նաև ուսումնասիրվել են զբոսաշրջային ծառայություններ մատուցող կազմակերպությունների գործունեության առանձնահատկությունները: Գործնական աշխատանքների շրջանակում ուսանողները այցելել են Երևան քաղաք, ինչպես նաև Տավուշի, Գեղարքունիքի և Կոտայքի մարզերի պատմամշակութային և զբոսաշրջային նշանակության մի շարք հուշարձաններ, թանգարաններ և այլ զբոսաշրջային օբյեկտներ:

«Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողները պրակտիկան անցկացրել են տարբեր կազմակերպություններում՝ աշխատելով մասնագիտական փաստաթղթերի, հաշվետվությունների, տեղեկատվական բազաների և կիրառական ծրագրային ապահովման (ՀԾ, Excel և այլն) հետ: Պրակտիկան նպաստել է մասնագիտական աշխատանքային միջավայրին ծանոթանալուն, փաստաթղթաշրջանառության կազմակերպման, հաշվետվությունների պատրաստման և հաճախորդների սպասարկման գործընթացներում գործնական հմտությունների զարգացմանը:

«Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողները կատարել են ծրագրային նախագծեր Python ծրագրավորման լեզվի և Flask շրջանակի կիրառմամբ: Աշխատանքները ներառել են մաթեմատիկական հաշվարկների իրականացում, տվյալների մշակում և դրանց գրաֆիկական ներկայացում՝ օգտագործելով NumPy, Pandas և Matplotlib գրադարանները:

«Դիզայն» կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանողները պրակտիկայի ընթացքում ուսումնասիրել են ապակենկարչության տեսակները, կիրառվող նյութերն ու տեխնոլոգիական առանձնահատկությունները, կատարելագործել մասնագիտական կարողությունները և անհատական ստեղծագործական մոտեցմամբ իրականացրել վիտրաժային տեխնիկայով դեկորատիվ բնապատկերների նախագծում և պատրաստում:

«Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողները խորացրել են խեցեգործության բնագավառում ունեցած տեսական գիտելիքներն ու գործնական հմտությունները: Սեփական էսքիզների հիման վրա ստեղծված աշխատանքները ենթարկել են առաջին թրծման, գունազարդման և երկրորդ թրծման, որի արդյունքում ձևավորվել են ավարտուն և գեղարվեստական ամբողջականությամբ առանձնացող ստեղծագործություններ:

Ուսումնական պրակտիկաների արդյունքների ամփոփման և ստուգարքների անցկացման արդյունքում բոլոր ուսանողները ստացել են «*ստուգված*» գնահատական:

Մանկավարժական պրակտիկային մասնակցել են հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի առկա ուսուցման 3-րդ, 4-րդ, ինչպես նաև հեռակա ուսուցման 4-րդ, 5-րդ կուրսերի ուսանողները և «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրի առկա ուսուցման 3-րդ և 4-րդ կուրսերի ուսանողները (ընդհանուր՝ **74 ուսանող**): Առկա ուսուցման պրակտիկաներն առաջին և երկրորդ կիսամյակներում հիմնականում իրականացվել են խմբային ձևաչափով՝ մասնաճյուղի հետ համագործակցության պայմանագիր ունեցող երկու հանրակրթական դպրոցներում՝ Իջևանի հ. 1 և Իջևանի հ. 5 հիմնական դպրոցներում: Հեռակա ուսուցման «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի 5-րդ կուրսի մանկավարժական պրակտիկան երկրորդ կիսամյակում կազմակերպվել է՝ հաշվի առնելով ուսանողների բնակության և աշխատանքի վայրերը:

Պրակտիկաների նախապատրաստական փուլում ՊԿՇՀ բաժինը կազմակերպել և համակարգել է դպրոցների հետ համագործակցության գործընթացը, վերանայել գործող պայմանագրերը, իրականացրել ուսանողների բաշխումը, կազմակերպել տեղեկատվական հանդիպումներ, ինչպես նաև պատրաստել և համապատասխան կրթական հաստատություններին ուղարկել 31 պաշտոնական գրություն:

Ուսանողների բաշխումն ըստ կրթական ծրագրերի, կուրսերի և պրակտիկայի վայրերի ներկայացված է աղյուսակ 1-ում։

Աղյուսակ 1. Ուսանողների բաշխումը ըստ կրթական ծրագրերի, կուրսերի և դպրոցների

N	Կրթական ծրագիր	Կիսամյակ	Իջևանի հ. 1 հիմն. դպրոց	Իջևանի հ. 5 հիմն. դպրոց
1	Տարր. մանկ. և մեթոդ. 3-րդ կուրս /առկա/	II կիսամյակ	7	
2	Տարր. մանկ. և մեթոդ. 4-րդ կուրս /առկա/	I կիսամյակ		14
		II կիսամյակ		14
3	Տարր. մանկ. և մեթոդ. 4-րդ կուրս /հեռակա/	I կիսամյակ	12	
		II կիսամյակ	12	
4	Տարր. մանկ. և մեթոդ. 5-րդ կուրս /հեռակա/	I կիսամյակ	16	
		II կիսամյակ	7	
5	Ռուսաց լեզու և գրակ. 3-րդ կուրս /առկա/	I կիսամյակ	8	
		II կիսամյակ		8
6	Ռուսաց լեզու և գրակ. 4-րդ կուրս	I կիսամյակ		7
		II կիսամյակ		7
Ընդհանուր			**62**	**50**

«Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի հինգ ուսանող (42%) առաջին և երկրորդ կիսամյակներում պրակտիկան իրականացրել են իրենց աշխատավայրերում՝ Սարիգյուղի, Ն.Ծաղկավանի, Գոշի, Սևքարի և Վազաշենի միջնակարգ դպրոցներում։

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի հեռակա ուսուցման 5-րդ կուրսի չորս ուսանող (19%) առաջին կիսամյակում պրակտիկան իրականացրել են իրենց աշխատավայրերում՝ Պառավաքարի, Նավուրի միջնակարգ և Դեղձավանի, Բնունիսի հիմնական դպրոցներում։ Երկրորդ կիսամյակում պրակտիկան կազմակերպվել է ըստ բնակության ու աշխատանքի վայրերի՝ ընդգրկելով Տավուշի, Սյունիքի և Գեղարքունիքի մարզերի 14 հանրակրթական դպրոց։

Հանրակրթական դպրոցներում պրակտիկայի արդյունավետ կազմակերպման նպատակով նշանակվել են մանկավարժ պատասխանատուներ, ովքեր աջակցել են ուսանողներին մանկավարժական կարողությունների ձևավորման և զարգացման գործընթացում։

Մասնաճյուղի կողմից նշանակված ղեկավարները պարբերաբար այցելել են դպրոց, հետևել ուսանողների գործունեությանը, կազմակերպել խորհրդատվություններ և մասնագիտական քննարկումներ։ Ուսանողների հետ աշխատել են նաև համալսարանի կողմից նշանակված մանկավարժը և հոգեբանը՝ աջակցելով նրանց մասնագիտական հմտությունների զարգացմանը, ինչպես նաև նպաստելով պրակտիկայի ընթացքում առաջացած հարցերի արդյունավետ լուծմանը։

Մանկավարժական պրակտիկայի ընթացքում ուսանողները իրականացրել են ուսուցչի մասնագիտական գործունեությանը բնորոշ աշխատանքներ՝ դիտարկել դասեր, կազմել դասապլաններ, վարել փորձնական և հիմնական դասեր, կիրառել ուսումնառության գնահատման տարբեր ձևեր, ինչպես նաև ներգրավվել դասվարական, արտադասարանական և դպրոցական միջոցառումների կազմակերպ-ման գործընթացում։ Կատարված աշխատանքներն արտահայտվել են ուսանողների թղթապանակներում, որոնք պարբերաբար վերահսկվել են պրակտիկայի ղեկավարների կողմից և ներկայացվել գնահատման։

Մանկավարժական պրակտիկաների ստուգարքների արդյունքներով բոլոր ուսանողները ստացել են «*ստուգված*» գնահատական։

Մանկավարժական և մասնագիտական պրակտիկաների ավարտից հետո ՊԿՇՀ բաժինը կազմակերպել է արտաքին շահակիցների հարցում՝ գնահատելու պրակտիկանտ ուսանողների մասնագիտական պատրաստվածությունը, մանկավարժական կարողությունները և անձնային հատկանիշները, ինչպես նաև բացահայտելու բարելավման հնարավոր ուղղությունները[1]: Հարցմանը մասնակցել են հանրակրթական դպրոցների կողմից նշանակված ղեկավարները («Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի ուսանողների համար դասվարներ, «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրի ուսանողների համար՝ «Ռուսերեն» առարկան դասավանդող ուսուցիչներ):

Հարցման մասնակիցների տվյալներն ըստ կրթական ծրագրերի ներկայացված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2.Հարցման տվյալներն ըստ կրթական ծրագրերի, կուրսերի և մասնակիցների

N	Կրթական ծրագիր	Ուսանողների թիվ	Հարցմանը մասն. թիվ	Մասն.%
1	Տարրական մանկավարժ. և մեթոդիկա 3-րդ կուրս	7	7	100%
2	Տարրական մանկավարժ. և մեթոդիկա 4-րդ կուրս	14	13	92.8%
3	Ռուսաց լեզու և գրականություն 3-րդ կուրս	8	8	100%
4	Ռուսաց լեզու և գրականություն 4-րդ կուրս	12	11	91.6%
Ընդհանուր		**41**	**39**	**95.1**%

Ստացված արդյունքներն արտահայտված են ստորև ներկայացվող 1-4 գծապատկերներում:

Գծապատկեր 1. «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի 3-րդ կուրսի հարցման արդյունքներ

[1]Հաշվետվության մեջ ներկայացված են միայն երկրորդ կիսամյակի հարցումների արդյունքները, քանի որ առաջին կիսամյակի հարցման արդյունքները ներկայացվել են տնօրենության նիստում (28.02.2026): Հարցումը կազմակերպվել է առկա ուսուցման ուսանողների համար, այն անցկացվել է անանուն, գնահատումն իրականացվել է 5-բալային սանդղակով, որտեղ 5-ը ամենաբարձր գնահատականն է, իսկ 1-ը՝ ամենացածրը:



ԵՊՀ ԻՄ ուսանողների համար որպես առավելություն դպրոցի դասվարները նշել են.

1. ժամանակակից մեթոդների իմացությունը և կիրառումը,
2. տեղեկատվական տեխնոլոգիաներին տիրապետելը:

Պրակտիկանտ ուսանողների մասնագիտական հմտությունները բարելավելու վերաբերյալ կատարված առաջարկներն են.

1. շատ կատարել դասերի վերլուծություններ և համագործակցել փորձառու ուսուցիչների հետ:

Գծապատկեր 2. «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի 4-րդ կուրսի հարցման արդյունքներ



ԵՊՀ ԻՄ ուսանողների համար որպես առավելություն դպրոցի դասվարները նշել են.,

1. տեսական գիտելիքները և այն կիրառելու կարողությունը,
2. տարբեր մեթոդների կիրառությունը,
3. դասարանը կառավարելու կարողությունը,
4. պատասխանատվությունը և աշխատասիրությունը:

Պրակտիկանտ ուսանողների մասնագիտական հմտությունները բարելավելու վերաբերյալ կատարված առաջարկներն են.

1. զբաղվել ինքնակրթությամբ, ունենալ հոգեբանական պատրաստվածություն, սթրեսակայունություն,
2. գնահատման գործիքների կիրառում, ուղղորդող հետադարձ կապի տրամադրում:

Գծապատկեր 3. «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրի 3-րդ կուրսի հարցման արդյունքներ



ԵՊՀ ԻՄ ուսանողների համար որպես առավելություն դպրոցի դասվարները նշել են.

1. պատրաստակամությունը, ակտիվ և ստեղծագործ լինելը:

Գծապատկեր 4. «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի հարցման արդյունքներ



ԵՊՀ ԻՄ պրակտիկանտ-ուսանողների մասնագիտական և մանկավարժական առավելությունների համար դպրոցի ուսուցիչները նշել են.

1. գրագիտությունը,
2. դասը պլանավորելու կարողությունը,
3. արդյունավետ մեթոդների ընտրությունը:

Պրակտիկանտ ուսանողների մասնագիտական հմտությունները բարելավելու վերաբերյալ կատարված առաջարկներն են.

1. հաճախ կազմակերպել հանդիպումներ մանկավարժների հետ:

Մասնագիտական պրակտիկաները 2025–2026 ուսումնական տարվա ընթացքում կազմակերպվել են բակալավրիատի առկա ուսուցման բոլոր կրթական ծրագրերի 4-րդ կուրսերի, հեռակա ուսուցման 5-րդ կուրսերի, ինչպես նաև «Հոգեբանություն» և «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագրերի հեռակա ուսուցման 4-րդ կուրսերի ուսանողների համար: Մասնագիտական պրակտիկային մասնակցել են նաև մագիստրատուրայի 2-րդ կուրսերի ուսանողները: Ընդհանուր մասնակիցների թիվը կազմել է **299**:

Մասնագիտական պրակտիկաների հիմնական նպատակն էր ապահովել ուսանողների տեսական գիտելիքների գործնական կիրառումը, նպաստել մասնագիտական կարողությունների զարգացմանը, աշխատաշուկային հարմարվելու կարողությունների ձևավորմանը և ավարտական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ նյութերի հավաքագրմանը: Այս նպատակների իրականացման համար կազմակերպման ընթացքում առաջնահերթ ուշադրություն է դարձվել համապատասխան պրակտիկայի վայրերի ընտրությանը, մասնագիտական միջավայրի ապահովմանը, գործընթացի համակարգված վերահսկողությանը և հաշվետվողականության կազմակերպմանը:

Համաձայն պրակտիկայի ղեկավարների կողմից ՊԿՇՀ բաժին ներկայացված պրակտիկայի վայրերի՝ մասնագիտական պրակտիկաները կազմակերպվել են ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում [2] և 99 այլ հաստատություններում (ըստ կրթական ծրագրերի):

Ուսանողների և պրակտիկայի վայրերի բաշխումն ըստ կրթական ծրագրերի ներկայացված է աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3. Մասնագիտական պրակտիկաներն ըստ կրթական ծրագրերի, ուսանողների և հաստատությունների

N	Կրթական ծրագիր	Ուսանողների թիվ	Հաստատությունների թիվ
Բակալավր			
1	Հոգեբանություն	42	20
2	Անգլերեն լեզու և գրականություն	30	5
3	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	23	3
4	Ֆինանսներ (ըստ ոլորտի)	91	34
5	Զբոսաշրջություն	37	16
Մագիստրատուրա			
1	Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա	17	15
2	Գործարար վարչարարություն (կառավարում)	8	6
Ընդհանուր		**248**	**99**

[2] «Դեկորատիվ-կիրառական արվեստ» և «Դիզայն» կրթական ծրագրերը, նաև «Վիքիմեդիա Հայաստան» գիտակրթական ՀԿ-ի հետ համագործակցությամբ՝ «Պատմություն», «Հայոց լեզու և գրականություն», «Անգլերեն լեզու և գրականություն» (18 ուսանող) «Ֆրանսերեն լեզու և գրականություն», կրթական ծրագրերը:

Պրակտիկանների իրականացման վայր են հանդիսացել կրթական ծրագրերի ուղղվածությանը և ուսանողների հետագա մասնագիտական գործունեությանը համապատասխանող հիմնարկ-ձեռնարկություններն ու կազմակերպությունները.

«Հոգեբանություն» կրթական ծրագիր - «Հույսի կամուրջ» ՀԿ-ի Իջևանի, Դիլիջանի երեխայի զարգացման և ընտանիքի աջակցության կենտրոներ, «UOU - Մանկական Գյուղեր» ՀԲՀ ծրագրային քաղաքականության իրականացման «Իջևան» մասնաճյուղ, տարբեր դպրոցներ, բժշկական և հոգեբանական ուսումնախորհրդատվական կենտրոններ,

«Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագիր – «Իջևանի գինու և կոնյակի գործարան» ՓԲԸ և տարբեր հասարակական կազմակերպություններ («Դիլիջանի համայնքային կենտրոն» ՀԿ, «Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն» ՀԿ, «Քաղաքացիական երիդասարդական կենտրոն» համայնքային զարգացման ՀԿ),

«Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագիր - Գիտական հետազաւտութիւնների զարգացման կենտրոն, «ԱՎՌՈՄԻԿ» ՍՊԸ, «ԷԼԹի Քոդինգ» ՍՊԸ,

«Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագիր - ՀՀ կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոն, «Արդշինբանկ», «Ֆասթ Բանկ», «ՎՏԲ Բանկ» «ԱՄԻՕ Բանկ» «Ակբա բանկ» և «Արարատբանկ» ԲԲԸ-ների մասնաճյուղեր, ՀՀ պետական եկամուտների կոմիտե, Տավուշի մարզպետարան, համայնքապետարաններ, Իջևանի և Դիլիջանի հաշվապահական հաշվառման գրասենյակներ, «Իջևանի գինու և կոնյակի գործարան» ՓԲԸ, տարբեր սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ, փակ բաժնետիրական ընկերություններ և այլն,

«Զբոսաշրջություն» կրթական ծրագիր - «Իջևանի գինու և կոնյակի գործարան» ՓԲԸ, Տուրիզմի զարգացման գործակալություն, տարբեր հյուրանոցներ, հոթելներ և հանգստյան գոտիներ,

Մասնագիտական պրակտիկաներն ընդհանուր ընդգրկել են ք.Երևանի և Տավուշի, Լոռու, Գեղարքունիքի, Կոտայքի, Արմավիրի մարզերի ընդհանուր 93 հաստատություններ[3]: Պրակտիկաների կազմակերպչական գործընթացն ապահովելու նպատակով ՊԿՇՀ բաժինը պատրաստել և համապատասխան կազմակերպություններին է ուղարկել **127** պաշտոնական գրություն, որոնց միջոցով կարգավորվել են ուսանողների ընդունման և պրակտիկայի իրականացման կազմակերպական հարցերը:

Մասնագիտական պրակտիկաները բակալավրի կրթական ծրագրով ընդգրկվել են e-learning.ysu.am համակարգում: Այդ նպատակով ՊԿՇՀ բաժինը կատարել է ուսանողների տվյալների գրանցում SV համակարգում, ԵՊՀ-ի Տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոնի հետ համագործակցությամբ ձևավորել համապատասխան դասընթացներ e-learning.ysu.am հարթակում, ապահովել ուսանողների մուտքը, խորհրդատվությունը և գործընթացի մշտադիտարկումը:

Պրակտիկայի ամբողջ ընթացքում ուսանողները մասնագիտական ամբիոնների ղեկավարների վերահսկողությամբ e-learning.ysu.am համակարգում պարբերաբար ներկայացրել են կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները, ավարտական փուլում՝ ընդունող կազմակերպությունների կողմից տրված կարծիք-բնութագրերը, ինչպես նաև մասնակցել պրակտիկայի վերաբերյալ հարցմանը:

Մասնագիտական պրակտիկաների ստուգարքների արդյունքների ամփոփմամբ բոլոր

[3] Տավուշի մարզի վեց հաստատություններում՝ «Իջևանի գինու, կոնյակի գործարան» ՓԲԸ-ում, «Յելլ Էքսթրիմ պարկ»-ում, «Իջևանի հ.1 հիմնական դպրոց»-ում, «Իջևանի հ.5 հիմնական դպրոց»-ում, Տավուշի մարզպետարանում և Նոյեմբերյանի համայնքապետարանում պրակտիկա իրականացվել է մեկից ավելի կրթական ծրագրերով:

ուսանողները ստացել են «*ստուգված*» գնահատական:

ՊԿԾՀ բաժնի կողմից ամփոփվել են նաև մասնագիտական պրակտիկաների վերաբերյալ **արտաքին շահակիցների հարցումների** արդյունքները, որն ըստ մասնակցության ներկայացված է աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Հարցման տվյալներն ըստ կրթական ծրագրերի, կուրսերի և մասնակիցների

N	Կրթական ծրագիր	Ուսանողների թիվ	Հարցմանը մասն. թիվ	Մասն.%
1	Հոգեբանություն 4-րդ կուրս	9	8	**89%**
2	Անգլերեն լեզու և գրականություն 4-րդ կուրս	12	11	**92%**
3	Ֆինանսներ (ըստ ոլորտի) 4-րդ կուրս	24	23	**96%**
4	Զբոսաշրջություն 4-րդ կուրս	12	12	**100%**
5	Ինֆորմատիկա և կիառական մաթեմատիկա 4-րդ կուրս	23	18	**78%**
Ընդհանուր		**80**	**72**	**90%**

Հարցման արդյունքները ներկայացված են գնահատման ցուցանիշներով (գծապատկեր 5-9) և մասնագիտական գործունեությունն ու պրակտիկան բարելավելու վերաբերյալ կատարված առաջարկություններով (եթե կատարվել են):

Գծապատկեր 5. «Հոգեբանություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի հարցման արդյունքներ



Ինչպիսի այլ որակներ են անհրաժեշտ տվյալ ոլորտում աշխատելու համար արտաքին շահակիցները նշել են.

1. քննադատական մտածողություն,
2. ինքնուրույն որոշում կայացնելու և խնդիրներին լուծումներ տալու կարողություն:

Պրակտիկան բարելավելու վերաբերյալ առաջարկվել է՝

1. ուսումնառության ընթացքում պրակտիկ փորձի ապահովում:

Գծապատկեր 6. «Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի հարցման արդյունքներ



Ինչպիսի այլ որակներ են անհրաժեշտ տվյալ ոլորտում աշխատելու համար արտաքին շահակիցները նշել են.

1. նախաձեռնողականություն,

Պրակտիկան բարելավելու վերաբերյալ առաջարկվել է՝

1. խրախուսել ակտիվ մասնակցությունը:

Գծապատկեր 7. «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի 4-րդ կուրսի հարցման արդյունքներ



Ինչպիսի այլ որակներ են անհրաժեշտ տվյալ ոլորտում աշխատելու համար արտաքին շահակիցները նշել են՝

1. նախաձեռնողականություն, ստեղծագործական և քննադատական միտք,
2. համբերատարություն և հանդուրժողականություն:

Պրակտիկան բարելավելու վերաբերյալ հարցմանը ի պատասխան նշվել է՝

1. ավելացնել գործնական աշխատանքների ծավալը՝ ուսանողներին ներգրավելով իրական հաշվապահական գործընթացներում:

Գծապատկեր 8. «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի հարցման արդյունքներ



Ինչպիսի այլ որակներ են անհրաժեշտ տվյալ ոլորտում աշխատելու համար արտաքին շահակիցները նշել են.

1. տարբեր իրավիճակներում արագ կողմնորոշվելու, խնդիրներին արագ արձագանքելու կարողություն:

Պրակտիկան բարելավելու վերաբերյալ առաջարկվել է՝

1. ուսանողներին ներգրավել իրական գործնական խնդիրների լուծման մեջ, որպեսզի նրանք զարգացնեն ճկունություն և արագ արձագանքելու ունակություն:

Գծապատկեր 9. «Ինֆորմատիկա և կիրառ. մաթեմատիկա» կրթական ծրագրի 4-րդ կուրսի հարցման արդյունքներ



Ինչպիսի այլ որակներ են անհրաժեշտ տվյալ ոլորտում աշխատելու համար արտաքին շահակիցները նշել են.

1. պատասխանատվության բարձր զգացում, նախաձեռնողականություն և խնդիրների արագ ու արդյունավետ լուծումներ գտնելու կարողություն:

Ամփոփելով արտաքին շահակիցների շրջանում պրակտիկայի կազմակերպման վերաբերյալ հարցման արդյունքները՝ նշենք, որ ՊԿՇՀ բաժնի կողմից մանկավարժական պրակտիկայի կազմակերպման գործընթացի գնահատման միջին միավորը կազմել է **4.8,** մասնագիտական պրակտիկայի կազմակերպման գործընթացի գնահատման միջին միավորը ևս կազմել է **4.8**:

Բացի արտաքին շահակիցների կարծիքների հավաքագրումից, կարևոր է նաև մասնագիտական պրակտիկայի վերաբերյալ **ուսանողների կողմից տրված գնահատականը**: Ուսանողական փորձը, որպես պրակտիկայի անմիջական կրող, կարևոր է կազմակերպման արդյունավետության, ուսումնական նպատակների իրագործման, համագործակցության որակի և գործնական հմտությունների ձեռքբերման տեսանկյունից: Ուսանողական հարցումը կազմակերպվել է e-learning.ysu.am համակարգի միջոցով՝ նպատակ ունենալով ստանալ հետադարձ կապ պրակտիկայի ամբողջ ընթացքի վերաբերյալ (սկսած նախապատրաստությունից մինչև ամփոփիչ գնահատում): ՊԿՇՀ բաժնի կողմից ամփոփվել են նաև մասնագիտական պրակտիկաների վերաբերյալ ուսանողական հարցումների արդյունքները, որն ըստ մասնակցության ներկայացված է աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5. Հարցման տվյալներն ըստ կրթական ծրագրերի, կուրսերի և մասնակիցների

N	Կրթական ծրագիր	Ուսանողների թիվ	Հարցմանը մասն. թիվ	Մասն.%
1	Պատմություն 4-րդ կուրս	15	15	**100%**
2	Հոգեբանություն 4-րդ կուրս	9	9	**100%**
3	Անգլերեն լեզու և գրականություն 4-րդ կուրս	30	30	**100%**

4	Ֆրանսերեն լեզու և գրականություն 4-րդ կուրս	5	5	**100%**
5	Հայոց լեզու և գրականություն 4-րդ կուրս	7	7	**100%**
6	Ֆինանսներ (ըստ ոլորտի) 4-րդ կուրս	24	24	**100%**
7	Զբոսաշրջություն 4-րդ կուրս	12	12	**100%**
8	Ինֆորմատիկա և կիառ. մաթեմատիկա 4-րդ կուրս	23	19	**82%**
9	Դիզայն 4-րդ կուրս	6	6	**100%**
10	Դեկորատիվ-կիրառական արվեստ 4-րդ կուրս	7	7	**100%**
Ընդհանուր		**138**	**134**	**97%**

Ուսանողական հարցմանը մասնակցել է 134 ուսանող, որը կազմում է հետազոտության մեջ ընդգրկված 138 ուսանողների 97 %-ը: Ստացված արդյունքներն արտահայտված են ստորև ներկայացվող գծապատկերներում (գծապատկեր 10–20):

Գծապատկեր 10. Ուսանողական հարցման արդյունքներն ըստ կրթական ծրագրերի



Ըստ գծապատկեր 10-ի՝ հարցման արդյունքները ցույց են տալիս, որ բոլոր կրթական ծրագրերով ուսանողները համաձայն են, որ պրակտիկայի սկզբում ներկայացվել են պրակտիկայի նպատակը, ակնկալվող արդյունքները, յուրաքանչյուր շաբաթվա համար ընթացիկ հաշվետվությունների և գնահատման ձևերը:

Բացասական գնահատականները գրեթե բացակայում են: Միայն «Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրում արձանագրվել է մեկ *«համաձայն չեմ»* պատասխան՝ 6 դրական պատասխանի դեպքում, որը դիտարկվում է առանձին դեպք:

Գծապատկեր 11. Ուսանողական հարցման արդյունքներն ըստ կրթական ծրագրերի



Գծապատկեր 11-ի տվյալները ցույց են տալիս, որ ուսանողների մեծամասնությունը դրական է գնահատել պրակտիկայի անցկացման ձևաչափի արդյունավետությունը՝ այն համարելով ուսումնառության ակնկալվող արդյունքների ձեռքբերմանը նպաստող: Գրեթե բոլոր կրթական ծրագրերում գերակշռում են *«համաձայն եմ»* պատասխանները, ինչը վկայում է, որ ընտրված կազմակերպչական մոտեցումները հիմնականում համապատասխանել են ուսանողների կրթական և մասնագիտական ակնկալիքներին:

Միևնույն ժամանակ, առանձին կրթական ծրագրերում արձանագրվել են մասնակի համաձայնության և անհամաձայնության պատասխաններ: Մասնավորապես, «Ֆրանսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրում 2 ուսանող համաձայնել է, իսկ 3-ը՝ միայն մասամբ, որը կարող է վկայել տվյալ ծրագրում պրակտիկայի կազմակերպման որոշակի բարելավման անհրաժեշտության մասին: «Պատմություն», «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» և «Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրերում արձանագրվել է մեկական անհամաձայնության պատասխան, որոնք, սակայն, ընդհանուր դրական պատկերի համատեքստում ունեն սահմանափակ ազդեցություն:

Գծապատկեր 12. Ուսանողական հարցման արդյունքներն ըստ կրթական ծրագրերի



Գծապատկեր 12-ի արդյունքները վկայում են, որ ուսանողների մեծամասնությունը դրական է գնահատել պրակտիկայի ընթացքում կատարվող հանձնարարական առաջադրանքների դերը մասնագիտական կարողությունների բարելավման գործում: Կրթական ծրագրերի մեծ մասում գերակշռում են «*համաձայն եմ*» պատասխանները, որը ցույց է տալիս, որ առաջադրանքների բովանդակությունն ու բնույթը հիմնականում համապատասխանել են ուսումնառության նպատակներին և նպաստել ուսանողների գործնական հմտությունների զարգացմանը:

Միաժամանակ առանձին կրթական ծրագրերում արձանագրվել են մասնակի համաձայնության պատասխաններ: Մասնավորապես, «Ֆրանսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրում գրանցվել է 3 «*համաձայն եմ*» և 2 «*համաձայն եմ մասամբ*» պատասխան, իսկ «Դիզայն» կրթական ծրագրում՝ 4 «*համաձայն եմ*» և 2 «*համաձայն եմ մասամբ*» պատասխան: Այս արդյունքները կարող են ցույց տալիս, որ տվյալ ծրագրերում առաջադրանքների բարդության աստիճանը, բովանդակությունը կամ մասնագիտական ուղղվածությունը կարող են հետագա կատարելագործման կարիք ունենալ:

Բացասական գնահատականները եզակի են: Մեկական «*համաձայն չեմ*» պատասխան է արձանագրվել «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» և «Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրերում, որը, ընդհանուր արդյունքների համատեքստում ևս դիտարկվում է առանձին դեպք:

Գծապատկեր 13. Ուսանողական հարցման արդյունքներն ըստ կրթական ծրագրերի



Գծապատկեր 13-ի արդյունքները վկայում են, որ մասնագիտական ամբիոնից նշանակված պրակտիկայի ղեկավարների աշխատանքը հիմնականում գնահատվել է դրական: Հարցվածների մեծամասնությունը ղեկավարների գործունեությունը գնահատել է «*գերազանց*»:

Միայն «Ֆրանսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրում «լավ» գնահատականների թիվը (4) գերազանցել է «*գերազանց*» գնահատականների թվին (1), որը կարող է վկայել տվյալ ղեկավարի աշխատանքի բարելավման անհրաժեշտության մասին կամ պայմանավորված լինել հարցվածների փոքր թվով: «*Բավարար*» գնահատականները հանդիպում են հազվադեպ, որը խոսում է պրակտիկայի կազմակերպման արդյունավետության և ղեկավարների մասնագիտական աշխատանքի մասին:

Գծապատկեր 14. Ուսանողական հարցման արդյունքներն ըստ կրթական ծրագրերի



Գծապատկեր 14-ի արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողները ԵՊՀ-ում ստացած գիտելիքները հիմնականում գնահատում են բավարար՝ պրակտիկայի ընթացքում մասնագիտական առաջադրանքները կատարելու համար: Միաժամանակ, առանձին կրթական ծրագրերում («Ֆինանսներ (ըստ ոլորտի)», «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա») *«մասամբ համաձայն եմ»* պատասխանների համեմատաբար բարձր թիվը ցույց է տալիս տեսական և պրակտիկ բաղադրիչի միջև կապի հետագա ամրապնդման անհրաժեշտությունը: Այդ նպատակով նպատակահարմար է շարունակաբար ընդլայնել կիրառական առաջադրանքների շրջանակը՝ ամրապնդելով համագործակցությունը պրակտիկայի վայր հանդիսացող հասատատությունների հետ:

Գծապատկեր 15. Ուսանողական հարցման արդյունքներն ըստ կրթական ծրագրերի



Գծապատկեր 15-ի արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողները բարձր են գնահատել ընդունող կողմից նշանակված պրակտիկայի ղեկավարների աշխատանքը: Գրեթե բոլոր կրթական ծրագրերում գերակշռում է *«գերազանց»* գնահատականը, որը վկայում է պրակտիկայի ղեկավարների արդյունավետ աշխատանքի, ուսանողներին ցուցաբերված մասնագիտական աջակցության և պրակտիկայի պատշաճ կազմակերպման մասին:

Հատկանշական է, որ բացասական գնահատականներ գրեթե չեն արձանագրվել: Միայն «Դիզայն» կրթական ծրագրում մեկ ուսանող տվել է «բավարար» գնահատական, մինչդեռ 5 ուսանող գնահատել է «գերազանց»: Արդյունքները ընդհանուր փաստում են պրակտիկայի ղեկավարների աշխատանքից ուսանողների ընդհանուր բավարարվածության մասին:

Գծապատկեր 16. Ուսանողական հարցման արդյունքներն ըստ կրթական ծրագրերի



Գծապատկեր 16-ի արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողների գնահատմամբ՝ պրակտիկայի կազմակերպման ընթացքում ապահովվել է պրակտիկայի վայրի լիարժեք համապատասխանությունը ուսումնասիրվող մասնագիտության ուղղվածությանը: Բոլոր կրթական ծրագրերում հարցված ուսանողները միաձայն նշել են, որ պրակտիկայի վայրը համապատասխանում է իրենց մասնագիտական պատրաստվածության և կրթական ծրագրի առանձնահատկություններին:

Գծապատկեր 17. Ուսանողական հարցման արդյունքներն ըստ կրթական ծրագրերի



Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողների գերակշիռ մասը բավարարված է մասնագիտական պրակտիկայից: Բոլոր կրթական ծրագրերում առավել մեծ մասնաբաժինը բաժին է ընկնում *«համաձայն եմ»* պատասխաններին, որը վկայում է պրակտիկայի կազմակերպման, բովանդակության և ուսանողների ակնկալիքների միջև համապատասխանության մասին:

Միաժամանակ, առանձին կրթական ծրագրերում արձանագրվել են եզակի բացասական գնահատականներ: «Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրում մեկ ուսանող նշել է, որ համաձայն չէ, իսկ «Դիզայն» կրթական ծրագրում մեկ ուսանող նշել է, որ համաձայն է մասամբ, մեկ ուսանող ընտրել է «կիրառելի չէ» տարբերակը: Հաշվի առնելով պատասխանների ընդհանուր ծավալը՝ այս գնահատականները համակարգային խնդիր չեն արտացոլում:

Գծապատկեր 18. Ուսանողական հարցման արդյունքներն ըստ կրթական ծրագրերի



Հարցման արդյունքներով ուսանողների գերակշիռ մասը նշել է, որ պրակտիկայի ընթացքում ձեռք բերված մասնագիտական կարողությունները հետագայում օգտակար կլինեն իրենց մասնագիտական գործունեության ընթացքում: Գրեթե բոլոր կրթական ծրագրերում առավել հաճախ ընտրված պատասխանը եղել է *«համաձայն եմ»* տարբերակը, որը փաստում է պրակտիկայի բովանդակության և կազմակերպման համապատասխանությունը կրթական ծրագրերի նպատակներին և աշխատաշուկայի պահանջներին: Միաժամանակ, «Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրում արձանագրվել է մեկ բացասական գնահատական, որը սակայն պատասխանների ընդհանուր ծավալում համակարգային խնդիր չի արտացոլում:

Գծապատկեր 19. Ուսանողական հարցման արդյունքներն ըստ կրթական ծրագրերի



«Պրակտիկայի դրական կողմերը» հարցի պատասխանների վերլուծությունը ցույց է տալիս, որ ուսանողների կողմից առավել հաճախ առանձնացվել է պրակտիկայի *ուսուցողական և արդյունավետ լինելը*, որն արձանագրվել է 104 անգամ: Սա վկայում է, որ պրակտիկան, ուսանողների գնահատմամբ, նպաստել է տեսական գիտելիքների խորացմանը, նոր փորձի ձեռքբերմանը և մասնագիտական կարողությունների զարգացմանը:

Հաճախ հիշատակված դրական կողմերից են նաև պրակտիկայի *արդիականությունն ու օգտակարությունը* (70 պատասխան) և *գործնական բնույթը* (69 պատասխան): Այս արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողների զգալի մասը պրակտիկան դիտարկել է որպես տեսական գիտելիքները գործնական միջավայրում կիրառելու և մասնագիտական փորձ ձեռք բերելու արդյունավետ հնարավորություն:

Միաժամանակ ուսանողները նշել են, որ պրակտիկան եղել է *բովանդակալից* (60 պատասխան) և *մատչելի* (50 պատասխան): Թեև այս հատկանիշները համեմատաբար ավելի քիչ են հիշատակվել, դրանք ևս արտացոլում են պրակտիկայի դրական ազդեցությունը ուսանողների մասնագիտական պատրաստվածության և կարողությունների ձևավորման գործընթացում:

Գծապատկեր 20. Ուսանողական հարցման արդյունքներն ըստ կրթական ծրագրերի



«Պրակտիկայի բացասական կողմերը» հարցին պատասխանել է 67 ուսանող, այսինքն հարցմանը մասնակցած ուսանողների 50 %-ը: Այս ցուցանիշը վկայում է, որ հարցվածների շուրջ կեսը պրակտիկան իրականացրել է առանց էական դժվարությունների կամ խոչընդոտների:

Բացասական կողմերի վերաբերյալ առավել մեծ թվով արձագանքներ գրանցվել են «Պատմություն» «Անգլերեն լեզու և գրականություն» «Ֆրանսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրերում: Ուսանողների կողմից առավել հաճախ նշվել է, որ պրակտիկան պահանջում էր ժամանակային զգալի ներգրավվածություն (31 պատասխան): Բացի այդ, որոշ ուսանողներ նշել են, որ պրակտիկան չէր համապատասխանում իրենց ակնկալիքներին կամ ժամանակակից պահանջներին (7 պատասխան), ոչ բոլոր դեպքերում էին բավարար հետաքրքրություն առաջացնում (5 պատասխան), ինչպես նաև պրակտիկայի ընթացքում ստացած գիտելիքներն ու հմտությունները գործնականում չունեն կիրառելիություն (4 պատասխան):

Ուսանողական հարցման արդյունքները, ընդհանուր առմամբ, ցույց են տալիս, որ ուսանողների մեծամասնությունը գոհ է մասնագիտական պրակտիկայի կազմակերպումից, իսկ դժվարությունները հիմնականում ունեցել են անհատական բնույթ: Ստացված գնահատականները համընկնում են արտաքին շահակիցների դիտարկումների հետ՝ ապահովելով պրակտիկայի արդյունավետության ամբողջական գնահատում: Հարցման արդյունքները կարևոր հիմք են պրակտիկայի կազմակերպչական և մեթոդական շարունակական բարելավման, կրթական ծրագրերի կատարելագործման և գործատու կազմակերպությունների հետ համագործակցության հետագա զարգացման համար:

ՊԿՇՀ բաժինը արտաքին շահակիցների և ուսանողական հարցումների արդյունքների վերլուծությունը կներկայացնի մասնագիտական ամբիոններին՝ դրանց քննարկման և կրթական գործընթացի կատարելագործմանն ուղղված որոշումների կայացման նպատակով:

Պրակտիկայի կազմակերպման և շահակիցների հետ համագործակցության բաժին